ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

11 օգոստոս,2021թ.

ՀՀ ԱԺ նախագահին

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 112 հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով 99-րդ հոդվածի 1-ին մասով՝ ԱԺ քննարկմանն է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման նախագիծը՝ «Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ՀՕ -001-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Նախագծի հիմնական զեկուցող՝ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աղվան Վարդանյան:

Կից ներկայացվում են խմբակցության համապատասխան որոշումը, նախագիծը, նախագծի ընդունման հիմնավորումը,

Առդիր՝ 5 էջ

Խմբակցության ղեկավար՝ Ս.Օհանյան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N

09.08.2021թ.

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 112-րդ հոդվածի 3-րդ մասերով

ՈՐՈՇԵՑ

ԱԺ քննարկմանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի որոշման նախագիծը՝ <<Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին>> Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի ՀՕ-001-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Նախագծի հիմնական զեկուցող նշանակել Աղվան Վարդանյանին:

«Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Ս. Օհանյան

«Հայաստան» խմբակցության քարտուղար՝ Ա. Մինասյան

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «արտաքին հարաբերությունների և Արցախի հարցերի մշտական հանձնաժողով՝ միջազգային հարաբերություններ, Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության, ինչպես նաեւ այլ միջազգային կազմակերպությունների հետ կապեր, միջխորհրդարանական համաձայնագրեր եւ կապեր, խորհրդարանական բարեկամական խմբեր, Արցախի Հանրապետության հետ կապեր, Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության միջեւ միջազգային պայմանագրերի և դրանց իրագործման, Արցախի խնդրի կարգավորման, Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության միջեւ հարաբերությունների կանոնակարգման և զարգացման, Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության օրենքների մոտարկման հարցեր եւ այդ ոլորտները կարգավորող օրենքներ (10 անդամ)»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի կողմից ընդունվելու պահից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2021 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին որոշման քննարկումների ժամանակ Ազգային ժողովի մեծամասնության կողմից մերժվեց Արցախի հարցերով մշտական հանձնաժողով ստեղծելու <<Հայաստան>> և <<Պատիվ ունեմ>> դաշինքների համատեղ առաջարկությունը: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվական օգոստոսի 6-ի «Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» թիվ ԱԺՈ-001-Ն որոշմամբ սահմանված Ազգային ժողովի 12 մշտական հանձնաժողովների գործունեության ոլորտներում որևէ հիշատակում չկա Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի համար կենսական և կարեւորագույն նշանակություն ունեցող Արցախի հիմնախնդրի լուծման հարցում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի դերակատարության, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հետ հարաբերությունների զարգացման, հայկական երկու հանրապետությունների միջև օրենսդրության մոտարկման և այլ հարցերի վերաբերյալ: Եվրոպական ինտեգրման հարցերի, Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովների առկայության պայմաններում Արցախի Հանրապետության հետ հարաբերությունների շեշտադրումն ու դրանց զարգացումն ունի սկզբունքային կարևորություն՝ ընդգծելու համար նաև Հայաստանի Հանրապետության (հետագա) բացառիկ դերակատարությունն Արցախի խնդրի լուծման, Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման և Հայաստանի Հանրապետության հետ հարաբերությունների զարգացման առումով:

2020 թվականի 44-օրյա պատերազմի և 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության ընդունումից հետո Արցախի հարցում ստեղծվել է նոր իրավիճակ՝ Արցախին և Հայաստանին կանգնեցնելով նոր մարտահրավերների առջև: Ժամանակակից պայմաններում ոչ միայն գործադիր, այլև օրենսդիր իշխանության կողմից անհրաժեշտ է մշտական և հետևողական աշխատանք իրականացնել Արցախի խնդրի կարգավորման շուրջ միջազգային հանրության, հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահության ակտիվ ներգրավվածության պայմաններում բանակցային գործընթացի վերսկսման, դրան նոր շունչ և բովանդակություն հաղորդելու ուղղությամբ, ինչը պետք է իրականացվի պարբերական և մշտական հիմունքներով, իսկ խորհրդարանական պետությունում դրա համարժեք կառուցակարգային ձևաչափ է Ազգային ժողովի մշտական հանձնաժողովը: Հաշվի առնելով, որ Արցախյան խնդրի կարգավորումն ուղղակիորեն կապվում է արտաքին քաղաքականության հետ և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնային գերակայությունը, ուստի այն պետք է ներառված լինի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի գործառույթների շրջանակում՝ նաև հանձնաժողովի անվանման մեջ հատուկ շեշտադրմամբ:

Խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող երկրում, ինչպիսին Հայաստանն է, պետության համար առաջնային և կենսական կարևորություն ունեցող խնդիրները չեն կարող ունենալ ածանցյալ նշանակություն, ուստի Արցախի հարցով առանձին մշտական հանձնաժողովի բացակայության պայմաններում Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի վերանվանումն ու դրա իրավասության ոլորտում Արցախի խնդրի լուծման և Արցախի Հանրապետության հետ հարաբերությունների զարգացման հարցերի ամրագրումն ունի առաջնային նշանակություն:

Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի հոդված 10-ը

սահմանում է, որ մշտական հանձնաժողովներն ստեղծվում են օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար: Արցախի հարցում հիշյալ գործառույթների իրագործումը ամբողջությամբ համապատասխանում է Սահմանադրության և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի վերաբերելի պահանջներին:

Արցախին վերաբերող հարցերի մշտական քննարկումն ու Արցախի Հանրապետության հետ հարաբերությունների զարգացումը համապատասխանում է նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի հոդված 12-ի պահանջներին, որով սահմանվում են մշտական հանձնաժողովի լիազորությունները: